Ամուսնությունը և ընտանիքը կարգված են Աստծո կողմից

Տղամարդու և կնոջ միջև ամուսնությունը

Ուսումնասիրեք.

Կարդացեք Մարկոս 10.6–9 Ա Կորնթացիս 11.11 հատվածները և Երիտասարդ կանանց նախկին գերագույն նախագահ քույր Բոնիի Լ. Օսկարսոնի հետևյալ խոսքերը. Փնտրեք ուսմունքներ տղամարդու և կնոջ միջև ամուսնության մասին:

Սուրբ գրությունները մեզ ուսուցանում են. «Բայց դարձեալ ոչ կինն առանց մարդի, եւ ոչ մարդն առանց կնկայ, Տէրումը» [Ա Կորնթացիս 11.11]: Յուրաքանչյուրի համար, ով ցանկանում է ձեռք բերել քահանայության բոլոր օրհնությունները, անհրաժեշտ է ամուսնու և կնոջ կնքումը Տիրոջ տանը, ովքեր միասին աշխատում են արդարակեցությամբ և հավատարիմ են մնում իրենց ուխտերին: Սա Տիրոջ Ծրագիրն է Իր զավակների համար և հասարակական ոչ մի դատողություն կամ քննադատություն ի զորու չի լինի փոխել այն, ինչ հայտարարել է Տերը: . . . Եկեք լինենք պաշտպաններն այն ամուսնության, որը կարգված է Տիրոջ կողմից, մինչ կշարունակենք սեր և կարեկցանք ցուցաբերել նրանց հանդեպ, ովքեր ունեն այլ տեսակետներ: (Բոնիի Լ. Օսկարսոն, «Ընտանիքի մասին հայտարարության պաշտպանները», *Լիահոնա*, մայիս 2015 թ., 15)

Քննարկեք.

- Ինչպե՞ս է կնոջ և տղամարդու միջև ամուսնությունն օգնում իրականացնել «Արարչի ծրագիրը Իր զավակների հավերժական ճակատագրի համար»: («Ընտանիք. Հայտարարություն աշխարհին», ChurchofJesusChrist.org):
- Ինչպե՞ս կարող ենք կարեկցանք ցուցաբերել այլ հայացքներ ունեցողների հանդեպ, միաժամանակ պաշտպանելով տղամարդու և կնոջ միջև ամուսնության մասին Փրկչի վարդապետությունը:

«Բազմացեք և լցրեք երկիրը»

Ուսումնասիրեք.

Կարդացեք Ծննդոց 1.27–28, Սաղմոս 127.3, Մարկոս 10.13–14 և Տասներկու Առաքյալների Քվորումից երեց Նիլ Լ. Անդերսենի հետևյալ խոսքերը: Փնտրեք Տիրոջ ուսմունքները երեխաների մասին:

Երբ մենք նայում ենք երեխայի աչքերի մեջ, մենք տեսնում ենք Աստծո զավակին՝ որդուն կամ դստերը, որը մեր կողքին կանգնած էր նախաերկրային կյանքում:

Երեխաներ ունենալու հնարավորություն ունեցող ամուսնու և կնոջ մեծագույն արտոնությունն է մահկանացու մարմիններ ստեղծել Աստծո այս զավակների համար: Մենք հավատում ենք ընտանիքներին և մենք հավատում ենք երեխաներին:

Երբ երեխա է ծնվում ամուսնու և կնոջ կյանքում, նրանք իրականացնում են մեր Երկնային Հոր ծրագրի երեխաներ աշխարհ բերելու մասը: Տերն ասել է. «Սա է իմ գործը և իմ փառքը՝ իրականացնել մարդու անմահությունն ու հավերժական կյանքը» [Մովսես 1.39]: Նախքան անմահությունը պետք է լինի մահկանացություն: (Նիլ Լ. Անդերսեն, «Երեխաներ», *Լիահոնա*, նոյ. 2011, 28)

Քննարկեք.

- Ինչպե՞ս կարող է երեխաներին և ընտանիքին հավերժության տեսանկյունից նայելն օգնել ամուսնացած զույգին առաջնահերթություններ սահմանել իրենց որոշումներում:
- Ի՞նչ կարող ենք սովորել Փրկչի օրինակից այն մասին, թե մենք ինչպես ենք վերաբերվում երեխաներին և շփվում նրանց հետ:

ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ
ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ
ԵԿԵՂԵՑԻ

© 2024 by Intellectual Reserve, Inc. All rights reserved. PD80007812_201_201-1